**Դրամաշնորհային աջակցություն «Մարդկային անվտանգության ծրագրերի» համար ՖՏ 2021 «Արյունաբանական կենտրոնին բժշկական սարքավորման տրամադրման» դրամաշնորհային ծրագրի ստորագրման արարողություն**

2022 թ. հունվարի 27-ին ՀՀ առողջապահության նախարարությունում տեղի ունեցավ «Արյունաբանական կենտրոնին բժշկական սարքավորման տրամադրման ծրագրի» 92,772 ԱՄՆ դոլար արժողությամբ դրամաշնորհային պայմանագրի ստորագրման արարողությունը՝ Ճապոնիայի կառավարության Մարդկային անվտանգության «Grassroots» ծրագրերի համար դրամաշնորհային աջակցության շրջանակում:

Դրամաշնորհային պայմանագիրը ստորագրվեց ՀՀ-ում Ճապոնիայի դեսպան պարոն Մասանորի Ֆուկուշիմայի և Արյունաբանական կենտրոնի տնօրեն պարոն Սամվել Դանիելյանի միջև: Արարողությանը ներկա էին առողջապահության նախարար Ն.Գ. տիկին Անահիտ Ավանեսյանը և նախարարության միջազգային հարաբերությունների վարչության պետ պարոն Արմեն Մելքոնյանը:

Ծրագրի նպատակն է բարելավել արյան քաղցկեղի ախտորոշման և մոնիտորինգի որակը՝ Արյունաբանական կենտրոնում տեղադրելով նոր հոսքային ցիտոմետր: Այս նախագիծն էլ ավելի կբարձրացնի Հայաստանի Հանրապետության բժշկական մակարդակը: Արդյունքում տարեկան ավելի քան 400 մարդ կօգտվի տվյալ ծրագրից:

Նախարար տիկին Ավանեսյանի ելույթը

Դեսպան Ֆուկուշիմայի ելույթը

Դրամաշնորհային պայմանագրի ստորագրումը

Պարոն Դանիելյանը և դեսպան Ֆուկուշիման